**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# ՈՐՈՇՈՒՄ

«22» դեկտեմբերի 2023թ. N ՄՌ/ 859 -Ա

ք. Արմավիր

## «ՄԱՐԳԱՐԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՈՒՍՅԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԵՎ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՕՐԵՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 160-րդ և 163-րդ, 164-րդ հոդվածներով և 167-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Արուսյակ Մուրադյանի 2023 թվականի դեկտեմբերի 21-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Մարգարայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արուսյակ Մուրադյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից 2024 թվականի հունվարի 16-ը ներառյալ՝ 15 աշխատանքային, 2 տոնական օր տևողությամբ:
2. Արուսյակ Մուրադյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Մարգարայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Մարգարայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական գծով տեղակալ Նաիրա Մարտիրոսյանին:
3. «Մարգարայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական գծով տեղակալ Նաիրա Մարտիրոսյանի աշխատավարձի վճարումն 2023 թվականի դեկտեմբերի 25-ից 2024 թվականի հունվարի 16-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Արուսյակ Մուրադյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի հունվարի 17-ից:
5. Արուսյակ Մուրադյանի 2022-2023 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր տևողությամբ տեղափոխել և տրամադրել նույն աշխատանքային տարում, բայց ոչ ուշ քան 18 ամսվա ընթացքում՝ սկսած այն աշխատանքային տարվա վերջից, որի համար մասնակի է հատկացվել ամենամյա արձակուրդը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ